ՀՏԴ 37.013

Դպրոցականների նախապատրաստումը մասնագիտության գիտակցված ընտրությանը

Լյուդմիլա Դանիելյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-221

Հանգուցային բառեր. *մասնագիտություն, մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական ինքնորոշում, աշխատաշուկա, կարիերա*

Նախաբան

Հոդվածի արդիականությունը: Արդի ժամանակներում գիտատեխնիկական նվաճումների հետևանքով շատ արագ են փոփոխվում միջավայրի պայմանները և հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում նաև կրթական համակարգը: Այսօր անհրաժեշտություն է դառնում դպրոցականների մասնագիտության գիտակցված ընտրության ուղիների որոնումը: Առաջանում են նոր մասնագիտություններ, ինչը ենթադրում է աշակերտներին մասնագիտության ընտրության նախապատրաստում: Սակայն պետք է նշել, որ հանրակրթական դպրոցում այդ հարցի դրվածքը մեզ բավարարել չի կարող: Այդ մասին են վկայում հետազոտության արդյունքները, և մասնագիտության սխալ ընտրության դեպքում նկատվում է հետևյալը.

- արհեստագործական ուսումնարանների շրջանավարտների 40 %-ը անմիջապես փոխում է մասնագիտությունը,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) շրջանավարտների 19.7 %-ը չի սիրում իր մասնագիտությունը,
- ՄՄՈՒՀ ընդունվածների 12 %-ը հեռանում է 1-ին կուրսից հետո,
- բուհերի շրջանավարտների 5 %-ն անմիջապես փոխում է իր մասնագիտությունը,
- բուհերի շրջանավարտների 3.7 %-ը չի սիրում իր մասնագիտությունը:

Այս ամենը վկայում է, որ ընտրված թեման արդիական է և հրատապ:

Հոդվածի նպատակը: Ուսումնասիրել հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների դրվածքը և որոշակի հետևություններ անել:

Հոդվածի նորույթը: Տեսական ուսումնասիրությունների և հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծության միջոցով ներկայացվել են դպրոցականների մասնագիտության ընտրության գործընթացի թերությունները վերացնելու ուղիները:

Տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հոդվածում ուսումնասիրվել և ներկայացվել են դպրոցականների մասնագիտության ընտրության խնդիրների հաղթահարման մանկավարժական ուղիների տեսական հիմքերը:

Գործնական նշանակությունն այն է, որ ուսումնասիրված նյութը կարող է աղբյուր հանդիսանալ մասնագիտության ընտրության խնդիր ունեցող շրջանավարտների և ծնողների համար:

Հիմնական մաս

Ինչ մասնագիտություն ընտրել, ինչպես ճիշտ կողմնորոշվել: Այս բարդ և պատասխանատու խնդրին առնչվում են գրեթե բոլորը: Որպեսզի հնարավորինս ճիշտ որոշում կայացվի, պետք է նախ և առաջ անձը ճանաչի ինքն իրեն, բացահայտի իր ունակություններն ու հետաքրքրությունները, հակումները, նախասիրությունները, պարզի այսօր շուկայում պահանջված մասնագիտությունները և դրանց մասին տեղեկատվություն հավաքի,

զրույցներ ունենա ծնողների, ընկերների, ուսուցիչների հետ: Մասնագիտական ինքնորոշման էությունը ընտրված մասնագիտության, զբաղմունքի, աշխատանքի շրջանակներում անձնական հետաքրքրության և իմաստի փնտրման և այն գտնելու մեջ է:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ դպրոցականների մասնագիտության գիտակցված ընտրության աշխատանքները շատ թույլ են նախապատրաստված:

Որոշակի տարիքից սկսած՝ մարդկանց մեծամասնությունը ներգրավում է այս կամ այն գործունեության մեջ և պատանեկության տարիների զգալի մասը տրամադրում է դրան նախապատրաստվելուն: Ուստի կարևոր է ոչ միայն տիրապետել գիտելիքներին, այլ նաև ընտրել անհատական առանձնահատկություններին առավելագույնս համապատասխանող գործունեության տեսակը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները: Սա դառնում է մասնագիտության հաջող յուրացման, աշխատանքային գործունեություն ներդաշնակ մուտք գործելու ամենակարևոր պայմանը:

Մասնագիտության ընտրության նախապատրաստումը կարևոր է նաև նրանով, որ այն հանդիսանում է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման անբաժանելի մասը, և դա հարկ է դիտարկել անձի բարոյական, աշխատանքային, մտավոր, քաղաքական, գեղագիտական և ֆիզիկական կատարելագործման միասնության և փոխներգործության հետ համատեղ, այսինքն՝ կրթական-դաստիարակչական գործընթացի ամբողջ համակարգով: Մասնագիտական կողմնորոշումը կարևոր է ինչպես յուրաքանչյուր մարդու զարգացման, այնպես էլ հասարակության գործառույթների համար: Եվ միևնույն ժամանակ մասնագիտական կողմնորոշումը նպաստում է հասարակության աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ բաշխմանը՝ ըստ հետաքրքրությունների, հակումների, անձի հնարավորությունների և որոշ մասնագիտությունների հաստիքներում ազգային տնտեսության պահանջարկին:

Մասնագիտական կողմնորոշումը մասշտաբով՝ պետական, արդյունքներով՝ տնտեսական, բովանդակությամբ՝ սոցիալական, մեթոդներով՝ մանկավարժական բարդ, բազմակողմանի խնդիր է:

Կադրերի մասնագիտական պատրաստվածության մակարդակի հանդեպ ժամանակակից արտադրության աճող պահանջները ներկայումս երիտասարդների մասնագիտական ինքնորոշման խնդիրներն ավելի արդիական են դարձնում, քանի որ սովորողների մեծ մասի մասնագիտական մտադրությունները հաճախ չեն համապատասխանում որոշ պահանջների: Երիտասարդների մասնագիտական ուղղորդումն իր էությամբ միայն մանկավարժական խնդիր չէ: Այն ավելի ճիշտ է կոչել հանրային խնդիր, որի լուծման համար միայն մանկավարժների ջանքերն ակնհայտորեն բավարար չեն: Մասնագիտական կողմնորոշման էությունը՝ որպես սոցիալական խնդիր, դրսևորվում է հասարակության կողմից կադրերի հավասարակշռված կառուցվածքի պահանջարկների և երիտասարդների սուբյեկտիվ մասնագիտական ձգտումների միջև հակասությունը հաղթահարելու անհրաժեշտության մեջ: Այսինքն՝ մասնագիտական ինքնորոշման համակարգը պետք է էական ազդեցություն ունենա աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ բաշխման, երիտասարդների կյանքի ուղու ընտրությանը:

Մասնագիտական կողմնորոշման համակարգը իր զարգացման ներկայիս փուլում կոչված է ապահովելու պետական մարմինների, դպրոցի, ընտանիքի, մասնագիտական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության և դրա իրականացման մեջ ներգրավված այլ սոցիալական հաստատությունների գործողությունների համակարգումը՝ միևնույն ժամանակ ապահովելով սովորողի անհատական մասնագիտական ուղղորդման բնույթի հետ կապված կրթական և կազմակերպչական հարցերի շարունակական և ժամանակակից լուծումները, հաշվի առնելով սոցիալ-տնտեսական կանխատեսումը:

Ապագա սերնդին հանուն հասարակության բարօրության, ստեղծագործ աշխատանքին նախապատրաստելը հանրակրթական դպրոցի կարևորագույն խնդիրն է: Դրա հաջող իրականացումը կապված է աշխատանքային և մասնագիտական կողմնորոշման առավել կատարյալ ուղիների անընդհատ որոնման հետ:

Դպրոցի՝ որպես բազմակողմանիորեն զարգացած, աշխատանքային գործունեությանը պատրաստ երիտասարդ սերնդի ձևավորման առաջատար ուսումնադաստիարակչական հաստատություն, սոցիալական դերը, պայմանավորում է մանկավարժական կոլեկտիվի կարևորությունը դպրոցի, ընտանիքի, ողջ հասարակության կողմից իրականացվող մասնագիտական բազմակողմանի կողմնորոշման միասնական, առաջատար գործընթացում: Ա. Վ. Մուդրիկը նշել է, որ յուրաքանչյուր մարդ, հատկապես մանկության, պատանեկության տարիներին, սոցիալականացման օբյեկտ է. «Մարդը դառնում է հասարակության լիարժեք անդամ՝ լինելով ոչ միայն օբյեկտ, բայց և, որ ավելի կարևոր է, սոցիալականացման օբյեկտ, յուրացնել սոցիալական նորմեր և մշակութային արժեքներ, ցուցաբերելով ակտիվություն, ինքնազարգանալով և ինքնակատարելագործվելով» [4, 21]: Սոցիալականացումը ենթադրում է նաև մարդկության աշխատանքային փորձի յուրացում:

Մանկավարժն օգնում է դպրոցականներին գիտակցելու իրենց հակումները, կարողությունները, ուղղորդում է նրանց մասնագիտական հետաքրքրությունների զարգացումը: Նա միաժամանակ օգնում է ծնողներին՝ հասկանալու իրենց երեխայի մասնագիտության ընտրության դժվարությունները և ճիշտ մոտեցում դրսևորելու այդ գործում: Մանկավարժը պետք է կարողանա, մանկավարժական տարբեր իրավիճակներից, իր սեփական կարողություններից, դպրոցականների հետաքրքրություններից և ընդունակություններից ելնելով, ընտրել մանկավարժական ներգործության հնարների ամբողջություն: Այսօր մասնագիտական ուղղորդման համակարգն իր մեջ ներառում է գործունեության հետևյալ ուղղությունները.

1. մասնագիտական կրթվածություն, ներառյալ մասնագիտական տեղեկատվությունը, մասնագիտական իրազեկումը,
2. նախնական մասնագիտական ախտորոշում՝ ուղղված անձի հետաքրքրությունների և կարողությունների հայտնաբերմանը այս կամ այն մասնագիտության համար,
3. մասնագիտական դաստիարակություն, որի նպատակն է դպրոցականների մոտ ձևավորել պատասխանատվության, պարտավորվածության, մասնագիտական պատվի և արժանապատվության զգացողություն,
4. սոցիալ-մասնագիտական հարմարեցում,
5. մասնագիտական խորհրդատվություն մասնագետ-խորհրդատուների կողմից:

Մասնագիտական կողմնորոշման համակարգի շատ կարևոր բաղադրիչ են համարվում սովորողների մասնագիտական կրթվածությունը, դրա փուլերը և բովանդակությունը:

Նախադպրոցական կրթություն – մանկապարտեզը ապագա մասնագիտությանը նախապատրաստելու առաջին կարևոր քայլն է, չնայած այն հանգամանքին, որ շատերին տարօրինակ է թվում մասնագիտական ուղղորդման խնդրի նման վաղ լուծումը:

Սաների ծնողներն աշխատում են տարբեր ձեռնարկություններում, իսկ այս տարիքի երեխաների համար բնական է ծնողների աշխատանքի հանդեպ հետաքրքրությունը, նրանց նման դառնալու ցանկությունը: Այդ աշխատանքներին նպաստում է նաև երեխաների ցայտուն հետաքրքրասիրությունը, երբ ամեն ինչ ուզում են իմանալ, և իզուր չէ, որ այդ տարիքի երեխաներին անվանում են ինչուիկներ: Այստեղ ծնողները և մանկավարժները պետք է շատ աշխատեն: Մենք առաջարկում ենք տարբեր ձևեր.

1. ներկայացնել մեկ մասնագիտության տարբերությունները մյուսից,
2. հարգանքով վերաբերվել տարբեր մասնագիտություններին, հասարակական-օգտակար աշխատանքին,
3. կողմնորոշվել տարբեր ոլորտների մասնագիտություններում (տեխնիկա, արվեստ, բժշկություն, տնտեսագիտություն, մշակույթ) և փոխկապակցել սեփական հնարավորությունները ու մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջները,
4. համարժեք որոշումներ կայացնել վերապատրաստման պրոֆիլի ընտրության հարցում, կարգավորել մասնագիտական ծրագրերը, գնահատել ընտրված մասնագիտական գործունեության պատրաստվածությունը:

Մասնագիտական ինքնորոշման խնդրին համակարգված մոտեցումը թույլ է տալիս ուսումնասիրել մի շարք օբյեկտիվ պայմաններ և միկրոմիջավայրերի գործոններ, որոնք ազդում են անձի վրա: Երիտասարդների վրա ազդում են տարբեր սոցիալական հաստատություններ, բայց հատուկ կրթական կառույցները չեն իրականացնում երիտասարդների մասնագիտական նախասիրությունների ձևավորմանը նպաստող իրենց գործառույթները:

Այս իրավիճակում հատկապես կարևոր է երիտասարդների սոցիալ-մասնագիտական ինքնորոշման կառավարումը: Մասնագիտության գիտակցված, նպատակային ընտրությունը հնարավոր է դարձնում խուսափել հասարակության տնտեսական, արտադրական, ֆինանսական կորուստներից և հնարավորություն է տալիս մարդուն կառուցելու իր կյանքը առանց ողբերգական հետևանքների:

Հետագայում լրացուցիչ հետազոտություններ են պահանջում անձի վրա ԶԼՄ-ների ազդեցության խնդիրները և մարդու գիտակցության մանիպուլյացիայի ենթարկումը: Անկասկած հետաքրքրություն է առաջացնում արժեհամակարգի ինքնորոշման մակարդակի ու անձի ձգտումների և նրա կյանքի ուղու ընտրության փոխկապակցվածությունը:

Երիտասարդների մասնագիտական ինքնորոշման կառավարումն ունի սոցիալական կարևոր նշանակություն:

Հետազոտության արդյունքները

Քանի որ մասնագիտական կողմնորոշման հարցերը հիմնականում լուծվում են հանրակրթական դպրոցում, ուստի մեր ուսումնասիրությունները իրականացրել ենք Վանաձորի մի շարք դպրոցներում: Հարցումը իրականացրել ենք հարցաթերթիկի և զրույցի մեթոդներով: Առաջին հերթին հարցումն իրականացրինք աշակերտների շրջանում:

Այն հարցին, թե ինչ մասնագիտություն են նախընտրում ձեռք բերել, հարցվածների մի մասը (20,6 %) պատասխանել է լեզվաբան, ծրագրավորող (19,5 %), մի մասը՝ հաշվապահ (13, 4 %), դիզայներ (10 %), տնտեսագետ (5 %), իրավաբան (10 %), նաև՝ զինծառայող (6 %), դերասան (10 %) և վերջապես՝ ճարտարապետ (5 %): Հարցումներին, թե ինչն է նրանց գրավում այդ մասնագիտության մեջ, հարցվածների որոշ մասը (40 %) պատասխանել է մարդկանց հետ շփումը, մի մասը (35,1 %)՝ բարձր վարձատրությունը, իսկ մյուս մասը (24, 9 %)՝ պատասխանատվության բարձր զգացումը: Մասնագիտություն ընտրելիս աշակերտների գերակշիռ մասը առաջնորդվել է ծնողների խորհրդով, մի մասն էլ միայնակ է փորձում ընտրություն կատարել: Մի փոքր մասը ուսուցիչների օգնությամբ է ընտրություն կատարել:

Անհանգստացնող է այն հանգամանքը, որ աշակերտները չեն ընտրել այսպես կոչված բանվորական մասնագիտություններ՝ խառատ, հացթուխ, խոհարար, վարորդ և այլն: Այն դեպքում, երբ այսօր շուկայի պահանջը կապված է այսպիսի մասնագիտությունների հետ: Դա նշանակում է, որ վատ են աշխատում դպրոցը և ընտանիքը: Շատ հաճախ ուսուցիչները աշակերտներին հորդորում են լավ սովորել՝ ասելով. «լավ չսովորես, մարդ չես դառնա,

կդառնաս փողոց մաքրող, հավաքարար», փոխանակ ներկայացնեն բոլոր մասնագիտությունների կարևորությունը հասարակական կյանքում:

Ելնելով արդյունքներից՝ զրույց ունեցանք մի շարք մանկավարժների հետ: Այն հարցին, թե ինչու են աշակերտները միայն այս մասնագիտությունները նշել, իսկ շուկայի պահանջները բավարարող մասնագիտությունները՝ ոչ, ստացանք պատասխան, որ դա իրենց անձնական գործն է:

Փաստորեն, այդ մանկավարժները ինքնամեկուսացվում են այդ կարևոր ոլորտից, ինչի հետևանքով ունենում են սոցիալական լուրջ խնդիրներ՝ կապված մասնագիտության փոփոխության հետ, ինչի մասին նշված է:

Եզրակացություն

1. Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հանրակրթական դպրոցը աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցերով համարյա թե չի զբաղվում:
2. Դպրոցը շրջանավարտներին կողմնորոշում է միայն դեպի բարձրագույն ուսումնական հաստատություն, որը վտանգավոր և սահմանափակ կողմնորոշում է:
3. Դպրոցի մանկավարժական կազմը պատրաստ չէ այդ աշխատանքները լիարժեք կազմակերպելուն:

Հարցի բարելավումը թելադրում է, որ դպրոցի վարչական աշխատողներից մեկը պետք է կրի պատասխանատվություն այդ ոլորտի համար և ուսուցիչների վերապատրաստումների դասընթացում հատուկ ուշադրության արժանանա:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-221

Գրականություն

1. Հովհաննիսյան Ս., Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2015:
2. Մելքումյան Յու., ՀՀ ավագ դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշման մեթոդական խնդիրները, «Բանբեր Երևանի Համալսարանի. սոցիոլոգիա, տնտեսագիտություն», 2015:
3. Աղաբեկյան Մ., Հարությունյան Հ., Անձի մասնագիտական ուղղվածության խնդիրը վաղ պատանեկան տարիքում, «Մանկավարժություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր» 2, Երևան, ԵՊՀ, 2016:
4. Мудрик А. Социальная педагогика, Москва, 2000.
5. Климов Е. Как выбрать профессию, Москва, 1990.

Подготовка школьников к осознанному выбору профессии

Людмила Даниелян

Резюме

Ключевые слова: *профессия, карьера, профессиональная ориентация, профессиональное самоопределение, рынок труда*

В последнее время становится очевидным, что внедрение дисциплины «Профессиональная ориентация» в школах становится необходимостью. Специалист по профориентации способен диагностировать желания и способности учащихся и выяснить, насколько они соответствуют требованиям определенных профессий.

В школе должно действовать активное сотрудничество между специалистами, учениками и родителями. Также должна существовать система профориентации, интегрированная в образовательный процесс и учитывающая изменения, происходящие на рынке труда. Эти изменения на рынке труда отражают появление новых, технически сложных профессий, которые могут быть привлекательными для молодежи.

Для того, чтобы обучающийся сделал осознанный выбор профессии, ему должна быть предоставлена возможность осознать и принять собственные интересы и способности, научиться ставить перед собой реалистичные цели и достигать этих целей, формировать и развивать способность совершать поступки, решения, которые облегчат переход от образования к работе на любом уровне. Сущность осознанного выбора профессии заключается в поиске и обретении личного интереса в рамках выбранной профессии, рода занятий и работы.

В процессе выбора профессии следует вспомнить, чем человек любит заниматься больше всего, какие профессии ему интересны. Дальше нужно убрать из этого списка сходства и общие черты, а затем попытаться понять, что важно в данной профессии и насколько полезна абитуриентам. Для достижения всего этого необходимы подготовительные и постоянные курсы.

Preparing Schoolchildren for the Conscious Choice of Profession

Lyudmila Danielyan

Summary

Key words: *profession, professional orientation, professional self-determination, labor market, career*

It's evident now that "Specialty selection" classes in schools are becoming a necessity. Here, the assistance of a specialist is required to make clear the goals and aptitudes and the ways of aligning them with the demands of particular professions.

There should be active cooperation in the school: specialist-student-parent. A system of professional orientation ought to be in existence now, integrated into the educational process, and adjusted to reflect the labor market's ongoing changes. Those changes in the labor market reflect the emergence of new, technically complex professions attractive to young people.

The learner needs to be given the chance to identify and assess his own interests and abilities, learn how to set and meet realistic goals for oneself, form and develop the decision-making skills necessary to make the transition from school to work at any level in order to make a deliberate choice of profession.

The search and finding of personal interest within the selected profession, occupations, or labour is the essence of making a conscientious decision about a specialty. When selecting a profession, it is important to keep in mind one's hobbies and interest in various things, then cross out any overlaps and try to understand what is more important in the given profession and how useful it is to the public. To achieve all this, preparatory and continuous courses are needed.

Ներկայացվել է 24.12.2023 թ.
Գրախոսվել է 12.02.2024 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.